



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

35

-26



30 MAY 2011

1844 m

174

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

830.
Մ-26
48

№ 2



8—12 տարեկանների համար.
(աւելի փոքրերին պատմելու նիւթ)

9-6686

Գերմաներենից փոխադրեց
Ա. ՉԻԼԻԿԱՐՅԱՆ



ԱՂԵՔՍԱՆԴՐԱԳՕՂ

Տպարան Գէորգ Ս. Սանոյեանցի

1904

371.



ԲԱՐԻ ՑՈՒԱԿԸ



Բարիկ Յալաիր բարի հօրն ու մօր միակ զաւակն էր. մայրը սիրում էր սիրուն որդեակին և աշխատում էր, որ նա լա լինի, շարից հեռանայ և ամեն մարդու սիրելի զաւակը: Հայրն էլ մօրից պակաս չէր օգնում. ամեն ժամանակ օրինակներով, բարի գործերով որդուն ցոյց էր տալիս՝ թէ ինչպէս պէտք է համեստ ու խելօք և բարի լինել, ուրիշներին օգնել: Այսպէս Յալաիր ուղիղ տասր տարի աղջկէս կրթւում էր: Ամեն մի բնակեր նրան սիրում էր, իսկ հարեանները միշտ գովում էին և ուրիշներին օրինակ բերում:

Ծննդեան տօնին Յալաիր մօրից բնծայ քառասուն. իսկ հայրը նրան մի արծաթ տուց, որ իրան համար ինչ կողէ աւնէ: Այդ օրը քաղաքում մեծ տօնաւաճառ կար. ինչէր առես, որ այնտեղ չկար. էլ տտելիքներ, շատ համեղ

Дозволено Цензурою 22 Января 1904 г. гор. Тифлисъ.

բաներ, պէտպէս պէտպէս խաղալիք, շատ սիրուն
չորեր, զրքեր, պատկերներ՝ սիրուն դարդարած,
մի խօսքով շատ բան: Յուակը վազեց մայրի-
կի մօտ և այսպէս ասաց.

„Մայրիկ, ի՞նչ ասենմ իմ այս փողով“:

— Ի՞նչ ես ցանկանում, ասաց մայրիկը:

„Տօնավաճառում շատ լաւ բաներ կան.
Ի՞նչ խաղալիքներ գոյն գոյն նախշերով, ո՞ր
մէկն ասեմ, սիրելի մայրիկ“:

— Եթէ այդպէս է, մէկին աս հետդ և գնա
այնտեղ, ինչ որ դու կուզես, հաւանիր, ընտ-
րիր, ասդա եկ ինձ մօտ, ս՛խափն գնանք, ցան-
կացածդ ասնենք:

Յուակն ուրախ վազեց բաղարը, գեռ տեղ
չէր հասել, որ մի բան տեսաւ — մի մանկիկի
մօտ երկար նա կանգնեց և ամեն ինչը լուռ
կերպով լսեց:

Մանուկը բորիկ, պտտառւած շորերով մօր
մօտը կանգնած, սիրով նայում էր այն շորի
վրայ, որ իր մայրիկը գնել էր ուզում, իրան
հազցնել:

Վաճառող կինը շատ լաւ հասկացաւ, որ
կինը խեղճ է. գրա համար էլ նրան շատ զի-
ջեց և գնի կէտը համարեա բաշխեց:

Կինը ուրախացաւ, զրպանից հանեց փողի

քսակը. համրեց մէկ երկու և շատ շատ անգամ,
բայց չլրացաւ. վաճառող կինը էլ չզիջանեց:

Խեղճ մայրը թողեց կիսամաշ շորը և որ-
դու ձեռքը բռնեց հեռացաւ. փոքրիկ մանուկը
սատտիկ տխրեց և մորմոքալով մօրը հետ գնաց:

Այս բոլոր բանը Յուակը տեսաւ, փոքրիկ
մանկան վրայ նա շատ ցաւեցաւ, էլ չկարողա-
ցաւ ուրիշ բան տունել. մօտեցաւ վաճառող
կնոջը, տւեց հօրից ստացած արծաթ դրամը՝
խնդրեց, ազաչեց, որ այն կնոջը նորից յետ
կանչէ և փոքրիկ մանկանը այդ շորը հազցնէ.
այդպէս էլ եղաւ:

Երբ փողը տւեց, Յուակը չկանգնեց, այլ
ուրախ ուրախ իսկոյն հեռացաւ և այդ ամենը
մայրիկին պատմեց:

Մայրը գոհ եղաւ սրբու արածից, զրկեց,
համբուրեց և նրան գովեց:

Մարդիկ պատմում են, որ մեծ հասակում
Յուակը դարձաւ շատ պէտքական մարդ և բա-
րի գործեր շատ շատ կատարեց:



ԱՂՋԻԿՐ ԵՒ ԿԱՏՈՒՆ

Փոքրիկ աղջիկը դռան մօտ նստած, պարտէզ էր նայում. մինակութիւնից նա ձանձրուցել էր: Յանկարծ ծառի տակ մի կտուռ տեսաւ. նա թաթիկները բերանն էր սանում, լեզուով իտտակում, երեսը մաքրում:

„Քաւական է, սիրուն փխփօ, ասաց աղջիկը. դու շատ մաքուր ես, եկ հիմայ ինձ մօտ, միտսին խաղանք և զւարճանանք“:

Փափիկ փխփիկը տեղիցը չշարժեց, այլ հանգիստ կերպով իրան մաքրում էր:

Աղջիկը նորից փխփիկին կանչեց, ձեռքերը պարզեց, որ իրա մօտ գայ: Փոքրիկ փխփիկը սուսիկ քայլերով, նազ նազ ծախելով աղջկան մօտեցաւ. բարեկամարար պուխը նրա ձեռներին քսեց, մուշ մուշ անելով պոչը բարձրացրեց, շորերին քսեց, սիրով նրա հետ խաղայ սկսեց:

Այս բանի վրայ աղջիկը ուրախացաւ և այսպէս ասաց.

„Ի՞մ փխփիկը շատ լաւ է, փայրի կատուի նման չէ:

Ամեն մի տան գարգարանք է, անմեղ տրդոց խաղընկերն է“:

Աղջիկը կատուի հետ երկար չխաղաց, այլ նրա պոչը շատ ամուր սեղմեց և ցաւեցրեց:

Կատուն բարկացաւ, ֆոթաց նրա վրայ, սուր ճանկերով աղջկան ճանկեց, ձեռքը վիրաւորեց ու փախաւ գնաց:

Ձեռքի ցաւիցը աղջիկը լացեց ու մենակ մնաց:

Աւաճ է. Ինչ ցանես, այն կը հնձես:

Չարերի հետ մարդ չի խաղայ:

Չարերն ընկեր չեն ունենայ:

Փ Ո Ք Ր Ի Կ Մ Կ Ն Ի Կ Ր

Ծատ տարի առաջ, իր ձագուկի հետ ապրում էր մի մուկ մեծ դաշտի միջին: Նրա ձագուկը բունը չէր սիրում, այլ միշտ ուզում էր կանաչ դաշտի մէջ, տաք արևի տակ դէս ու դէն ման գալ և զւարճանալ: Նա չէր մտածում թէ դաշտի մէջը մեծ վտանգներ կան և ինքը զրանց անշուշտ զոհ կերթար, եթէ շատ զգուշ, խելօք չշարժէր: Մայրը ամեն օր խրատ էր կարդում, որ զգուշ լինի, շուտ շուտ դուրս չլուգայ, թէ չէ շար կատուի սուր սուր ճանկերին նա զոհ կը դառնայ: Մի օր էլ բնի ա-

ուաջր նստած, մայր և որդի դուրս էին նայում
կապոյտ երկնքին, պայծառ արևին:

„Չգնամ, տեսնեմ, սիրելի մայրիկ, թէ
ի՞նչ կայ այնտեղ. տես ինչպէս խոտերը սի-
րուն շարժում են, նախշուն ծաղիկները դէս
դէն կռանում, օրօրում, քամու դէմ խաղում.
երևի այնտեղ մի հետաքրքիր բան է կատար-
ւում. երթամ մի տեսնեմ, թէ ի՞նչ կայ այնտեղ“:

— Ես քեզ ասում եմ բնից դուրս մի գայ,
ասաց նրան մայրը՝ խոր անխ քաշելով: Մի՞թէ
չգիտես, միակ գաւակս, որ քո քոյրերից մի
օրում զրկւեցի. եթէ շար կատուն քեզ էլ վը-
նասէ, ի՞նչ պիտի անեմ: Տերեկով վատ է բնից
դուրս գալը, միշտ էլ վտանգ կայ, դրա հա-
մար էլ ես թոյլ չեմ տալիս տեղիցդ շարժել:
Եթէ քաղցած ես, պաշար շատ ունենք, կարող
ես ուտել, որչափ ուզում ես: Տես ի՞նչպէս հա-
մեղ զագարներ ունինք. երբ մութն ընկնի, նոր
մենք դուրս կըգանք, հասկացար հիմայ:

Բայց շար ձագուկը լսել չէր ուզում, այլ
ցանկանում էր իսկոյն դուրս թռչել, ամեն
ինչ տեսնել. մի քանի անգամ մայրը չթողեց,
երեք անգամ էլ ականջը կծեց, որ տեղում մը-
նայ: Հէնց որ մայրը ուտելու գնաց, ձագը դուրս
թռաւ, դէս ու դէն վազեց. կէս ժամ չէր ան-

ցել, որ լեղապատառ, արիւնով ներկւած բնի
մէջ մտաւ և անշնչացած մօր մօտն ընկաւ:
Մայրը շարշարեց, արիւնը լիզեց, վէրքերը
մաքրեց և շատ արտասուեց: Վերջապէս ձագը
ուշքի եկաւ, աչքերը բացեց և մօրը նայեց:

— Տեսնում ես, որդիս. եթէ լսէիր, չէիր
պատժւիլ. փոքրերը մեծերին միշտ պէտք է
լսեն և հնազանդւեն. չէ՞ որ ես մեծ եմ, քեզա-
նից փորձւած, աշխարհի բաները շատ լաւ ճա-
նաչում. թող այդ փորձանքը քեզ խրատ լինի
և երանի թէ վերջինը լինէր. էլի փառք Աս-
տուծոյ, որ դու առողջ ես: Այժմ ինձ ասա,
ինչպէ՞ս պատահեց, ո՞վ քեզ մնասեց: —

Ձագուկը պատմեց. „Երբ որ դուրս պրծայ,
շատ ուրախ, գւարթ ամեն կողմ ընկայ, ամեն
բան տեսայ. յանկարծ հեռում մի կատու տե-
սայ գետնի վրայ փուլած. նա չէր շարժւում,
այլ անշարժ պառկած էր. ես էլ կարծեցի, թէ
նա սատկած է, դրա համար էլ մօտեցայ նրան,
ուզեցայ տեսնել նրա ճանկերը: Չէ՞ որ շատ
անգամ դու ինձ պատմել ես նրա սուր ու կեռ
ճանկերի մասին. հէնց այդ ճանկերը ուզեցայ
տեսնել, մօտից շօշափել: Դեռ բոլորովին չէի
մօտեցել, երբ նա թաթերի սուր սուր ճանկերով
այնպէս պինդ խփեց, ուզեց ինձ բռնել՝ որ ես

տարսափած՝ մէկ շունչ առնելով՝ քեզ մօտ վա-
զեցի և այստեղ հասայ: Այ դու անիծած, սուր ու
կեռ ճանկեր, ինչպէս իմ վիզը խիստ ցաւեցրեց,
արիւնս հանեց,»:

Այդպէս ասելով, փոքրիկ թաթիկը աչքե-
րին դրեց, դառնազին լացեց:

— Էլ կուզես դուրս գալ, էլ այսուհետև ըզ-
գուշ չես լինի՞, հարցրեց մայրը—:

„Օհ, էլ ես դուրս չեմ գայ, ինչ կուզէ լինի.
ոչ մի պայմանով և ոչ մի անգամ բունը չեմ
թողնի. քեզ հետ էլ չեմ գայ, ասաց ձագուկը և
կրկին լացեց,»:

Անցան շատ օրեր, ձագուկը լաւացաւ. որ-
չափ ուզում էր բնիցը դուրս գալ, մաքուր օդ
չնշել, լոյս աշխարհ տեսնել, բայց նա վախիցը
չէր կարող: փոքրիկ մկնիկը սրտի ցաւիցը էլ
բան չէր ուտում, քանի գնում էր և թուլանում
էր և նւագում էր: Մայրն այս տեսաւ, սաստիկ
տխրեցաւ: Նա արտասուելով միշտ մտածում էր.

— Ի՞նչ պէտք է անել, որ միակ որդուն փրկէ,
ազատէ: Մի քանի անգամ շատ զգուշ կերպով
որդուն դուրս տարաւ, լոյս աշխարհ հանեց, մա-
քուր օդի մէջ, տաք արևի տակ՝ այս ու այն
կողմը նրան ման ածեց, բայց տխրութիւնից
որդուն չփրկեց:

„Էս ի՞նչ վատ կեանք է, դժբաղդութիւն է
մկնեբրիս կեանքը, դառնացած կերպով ասում
էր ձագը. շատ լաւ կրլինէր, որ չծնէի և
մուկ չլինէի: Աստուծոյ աշխարհում բոլոր կեն-
դանիք, բոլոր ծաղիկներ և բոլոր խոտեր օդի
մէջ շարժւում, քամուց օրօրւում, սիրուն կապու-
տակ երկնքին նայում, մաքուր օդ շնչում. բոլորի
մէջ միայն մենք ենք, որ գետնի տակը՝ մութ
նեղ բներում պէտք է թագ կենանք. էլ կատու,
ոզնի, բազէ ու ազուաւ, ամենքը պատրաստ են
դժբախտ մկնեբրիս հալածել, ուտել, խփել սպա-
նել: Ա՛խ, որչափ կուզէի, մի վայրի ծաղիկ դաշ-
տում լինէի, որ ամբողջ օրը քամու առաջը մէկ
օրօրւէի, մէկ էլ խաղայի. այն ժամանակը սի-
րուն երկնքին ես կը նայէի, բարև կըտայի:
Փոքրիկ մեղուն ինձ մօտ հիւր կըգար, ծաղկիս
թերթերին համբոյրներ կըտար, կըշտանար կեր-
թար: Ա՛խ, ինչ լաւ կրլինէր, որ այդպէս լինէր“:

— Այդպէս մի ասի, սիրուն ձագիկս, դու
ինձ հաւատա, որ այս աշխարհի մէջ ամեն կեն-
դանի, ամեն մի ծաղիկ և ամեն մի բոյս միշտ
բաղդաւոր չէ. լաւ ու վատ բաներ նրանց կեան-
քի մէջ միշտ անպակաս են. թէ կասկածում
ես, եկ, բնից դուրս գանք, հարցնենք, իմա-
նանք—: Այդպէս էլ արին:

Նրանք կանգնեցին վայրի ծաղկի մօտ, փոքրիկ մկնիկն այսպէս հարցրեց.

„Սիրուն ծաղիկ, ուղիղն ասա,
Չատ ուրախ չե՞ս, որ միշտ քեզ մօտ
հիւր են գալիս
ժիր մեղուններ և թիթեռներ:
Սրևի տակ օրօրում ես,
Մաքուր օդով զովանում ես,
Նազ ծախելով կռանում ես,
Հանգիստ կանքով լաւ անում ես.
Ասա խնդրեմ, սիրուն ծաղիկ,
Բայց գաշտի մէջ բաղդաւոր չե՞ս“:

Վայրի ծաղիկը խոր ախ քաշեց, փոքրիկ մկնիկին այսպէս ասեց.—

—Ի՞նչ ասեմ քեզ, սիրուն մկնիկ, ինձ թւում է, ինչ էլ լինի, ամեն մէկը իր կեանքիցը գոհ պիտի լինի. թէ ինձ մնար, ես շատ կուզէի մուկ ծնւած լինել, քան վայրի ծաղիկ —:

Ծաղկի վճիռը, երբ մուկը լսեց, սարսափեց, կանգնեց, հագիւ լսելի ձայնով ասեց. „Մուկ լինել կուզե՞ս, մի՞թէ դա ճիշտ է, թէ խելքդ ես թուցրել. դէհ, մէկ էլ ասա, իսկապէ՞ս կուզես դու մկնիկ լինել,“:

—Չատ մի գարմանար, փոքրիկ բարեկամ,

յրտանց կուզէի, որ մուկ լինէի. ես դրա հաւար ունիմ պատճառներ, էլ մի գարմանար, իբր թէ ես գժւել եմ:

Իմ ինչո՞ւն է պէտք գեղեցիկ ծաղիկ, նախուն թերթիկներ, երբ ամբողջ տարին ինձ մօտ չի գալիս ոչ մի հատիկ մարդ. ոչ մէկը չկայ, որ գեղեցկութիւնս տեսնի, գին դնէ, որ ես էլ ասեմ, հա՛, բանի պէտք եմ:

Ամբողջ ամառը տաք արևի տակ միշտ խանձւում եմ. իսկ ողջ ձմեռը միշտ պէտք է քնեմ, ցրտիցը մրսեմ, դողամ ու սառչեմ: Չմեռւայ ցրտից եթէ ազատեմ, գեղեցիկ ծիւեր վերև արձակեմ, էն էլ չեմ կարող լաւ, ուրախ անեսել: Ամառւայ կիսին գիւղացին կըգայ, սուր զերանդիով խոտեր կըհնձէ, ինձ ու ծիւերիս կեանքից կըզրկէ, խոտերի հետը գետին կըձգէ. դրանից յետոյ ի՞նչ պիտի լինենք, կամ մի տաւարի ուտելիք և կամ թոնրի կրակի բաժին, այրել վերջանալ. այս է լաւ բաղդը և կամ լաւ վիճակ: Այժմ դու ասա, մի՞թէ անբաղդ չեմ—:

Մկնիկը լռեց և կրակումալով հագիւ այս ասեց. „Իրաւունք ունես, սիրելի ծաղիկ, խնդրեմ ինձ ներիր, որ քո դարձերը ես նորոգեցի“:

„Բայց ահա ճպուռը՝ տես, ի՞նչպէս ուրախ ձայներ հանելով թռչում է արագ. երևի դա

չատ բաղդաւոր կըլինի»: Խօսքը բերանն է
երբ մէկ էլ յանկարծ ծառի ճիւղիցը փոքր
թռչնիկը ճպուռին կըտոցեց և անուշ արեց:

Մկնիկը զարմացած բաց բերան մնաց, նց
ձայն չհանեց, այլ հանգիստ կերպով մօր մօտ
վազեց, որ շուտ տուն դաւնան և բնում ապրե-

Թ Ռ 2 Ն Ի Կ

Չմեռ էր, սառը քամին զիլ փշում էր. էլ դաշտ
էլ ձոր, սար ու անտառ ձնով ծածկել լցել էլ
Դուրսը ցուրտ էր, սաստիկ ցուրտ էր. կենդանի
ցրտի ձեռքից փախել մտել են տաք տեղերը:

Այդ միջոցին էր, ինչպէս պատահեց, ոչոք չգիտէ
մի փոքրիկ թռչուն դրսում թռչում էր. ուր էր նա գնում
ինքն էլ չգիտէր: Բաղդից թուլացած, ցրտից փէտ
ցած, հազիւ շարժւում էր. ափսոս, խեղճ թռչնիկ:

Մէկ էլ ցուրտ քամին թռչնիկին քշեց, իր հետ
տարաւ. բարեբաղդաբար մի լուսամուտի յանկարծ պ
տահեց. թռչնիկը դիպաւ սառը ապակուն, հազիւ հ
մի կերպ տեղումը կանգնեց. անզգայաբար փոքրիկ կ
տուցով ապակուն խփեց:

Հէնց այդ ժամանակ փոքրիկ երուշը սենեակի մէ
ջը, սիրուն նօրիկի, սիրուն նօրիկի հետը նստած էր
նախաճաշում էր: Ապակու ձայնից վերև նայեցին
լուսամուտի երկաթի վրայ փոքրիկ թռչնիկին թառա
տեսան. իսկոյն վազեցին, մայրիկին ասացին:

Մայրիկը եկաւ, թռչնիկին տեսաւ, շատ շատ մեղ
քացաւ և զգուշութեամբ լուսամուտի փեղկերը բացեց,

չհամբերեց փոքրիկ թռչնիկը, իսկոյն ներս թառ
ալի սենեակը:

«Մայրիկ ջան, մայրիկ, թռչնիկին մի տես. տե
ր, չէ շարժւում, կարծես սառած է, ասաց նօրիկը»:

— Մի քիչ համբերիր, անուշ նօրիկս, քիչ էլ սպա
ր, նա կը տաքանայ՝ նոր կը շարժւի, ասաց մայրիկը—:

«Մայրիկ, ինչ կըլինի, մեր նախաճաշից թռչնիկին
տանք, ասացին երկուսը՝ մօրը դիմելով»:

— Գերակրեցէք, միայն խօսք տւէք, որ դուք թռչնի
ն ձեռքով չբռնէք, անհանգիստ չանէք—:

«Չատ լաւ, շատ լաւ, մենք խօսք ենք տալիս,
ուցին նրանք»: Սրանից յետոյ իսկոյն ափսէի մէջը

թ լցրին, մի փոքր էլ հացի կտոր փշրեցին, առանց
մուկի տարան թռչնիկի մօտը դրեցին, շուտով
ռացան:

Մանուկներն իրանց ուտելը մոռացան, իրար մօտ
տած, ձայները կտրած, հեռւից նայում էին փոք
րիկ թռչնիկին:

«Տես, տես, երուշ, թռչնիկը շարժւում է, փսփսալով
ուց նօրիկը:

Գաթին է նայում, երևի կուտէ. շքնչաց երուշը:
Գերաւ, կերաւ. սյ, խմեց էլ. շնչերը կտրած, ի
նց պահելով, ասացին մանուկները. ինչ լաւ եղաւ, ինչ
եղաւ»:

Մէկ էլ թռչնիկը թըռ . . . վառարանի վրայ. մի
քր նստեց, դէս ու դէն նայեց, թեքը մաքրեց.

էլց երբ որ յանկարծ փոքրիկ կտուցը բացեց ու եր
ց, նօրիկն ու երուշը ուրախութիւնից էլ չգիտէին,
ինչ պիտի անեն: Բարձր ձայներով, գոռում պոչու
վ, իսկոյն վազեցին միւս սենեակը, մայրիկ կանչեցին:

«Եկ՛ տես, մայրիկ ջան, շուտ արա, դէ՛հ եկ, տես
չպէս թռչնիկը ուրախ երգում է»:

Մայրը գոհ սրտով իր փոքրիկների ձեռքերից բը
նեց, սենեակը մտաւ, թռչնիկին լսեց:

— Տեսնո՞ւմ էք, որդիքս, դուք թռչնիկին ցրտից, քա
ցից ազատեցիք, հանգիստ թողիք, նա էլ ձեզ համ
քաղցը երգում է, որ ուրախ լինիք—:

«Մայրիկ ջան, մայրիկ, սիրուն թռչնիկին մեզ մե
կը թողնես. հա՛, բարի մայրիկ. ասացին երկու մանու
կները միասին»:

— Քանի ձմեռ է, դուք նրան խնամքով, կարգով
պահէք. որ նա ձեզ համար լաւ երգեր երգէ. իսկ ե
զարուն գայ, դուք նրան ազատ պիտի թողնէք: Ե
թռչնիկը ազատ չապրի, նա սրտի ցաւիցը կըմեռնի:

«Եթէ այդպէս է, ուրեմն, մայրիկ, ինչ դնենք թըռ
նիկի անունը»:

— Ի՞նչ կուզէք դնել, ապա ասացէք, ասաց նրան
մայրը—:

Ձատ դէս դէն ընկան, շատ անուն գրին, ոչ մէ
կէ չեղաւ. վերջաջէս նրան կարմրակատար ասացի
որովհետեւ նրա կատարը բաւական կարմիր էր:

Նօրիկն ու Երուշն ամբողջ ձմեռը ուրախ, շա
ուրախ օրեր անցուցին իրանց սիրունիկ կարմրակ
տարի հետ:

Անցաւ ձմեռը, եկաւ գարունը. ծառեր, ծաղի
ներ նորից կեանք առան, սիրուն կանաչով կրկ
ծածկւեցին. կեանք, ուրախութիւն զրտումը ծաղկե
լուսամուտները նոյնպէս բացւեցին: Մի օր էլ յա
կարձ կարմրակատարը լուսամուտիցը թըռ... դուրս

նօրիկն ու Երուշն խիստ շատ տխրեցին, որ ի
անց թռչնիկից իսպառ գրկւեցին:

«Ինչո՞ւ նա գնաց, սիրելի մայրիկ, ինչո՞ւ մեզ թ
ղեց. չէ որ մենք նրան շատ էինք սիրում. ափսո՞ս, ա
ափսո՞ս, ինչո՞ւ նա գնաց»:

— Ձատ միք ափսոսաւ, անուշ որդիքս. թռչնիկը գը
նաց մօտիկ անտառը, որ այնտեղ իրան փափուկ բուն
շինէ, ձւիկներ ածէ, վրան թուխս նստի, ձագուկներ
հանէ: Նա պիտի նրանց պահէ, պահպանէ, որ ձագուկ
ները շուտով մեծանան, իրանց մայրիկին ուրախացը
նեն. հասկացա՞ք հիմայ—:

Անցաւ գարունը, եկաւ ամառը. մի անգամ նօրիկը
իր քրոջ հետը նստել էր ծառի հովանու տակը, հան
գիստ խաղում էր: Մէկ էլ վերեւից մի շատ գեղեցիկ
քաղցը ձայն լսեց: Մանուկներն իսկոյն վերեւ նայեցին,
հանգիստ լսեցին:

«Երո՞ւշ, այ՛ Երուշ, շատ սաստիկ ձայնով ասաց նօ
րիկը. տես, մի լաւ տես. դա մեր սիրելի կարմրակա
տարը չէ»:

Իսկ և իսկ նա է, ասաց Երուշը»:
Այս բանից յետոյ նրանք վեր թռան, ուրախ-ուրախ
վերեւ նայեցին, թռչնիկին տեսան: Նրա մօտը, իսկ իրա
նման երկուսն էլ կային. «երեւի գրանք նրա ձագերն են»,
ասացին նրանք և իսկոյն թռան մայրիկի մօտը:

— Աիշտ էք նկատել, ասաց մայրիկը. գրանք
կարմրակատարի ձագուկներն են: Տեսնո՞ւմ էք, բաւէքս,
դուք կարմրակատարին լաւութիւն արիք, նա ձեր արած
բարի, լաւ գործը էլ չմոռացաւ: Այժմ եկել է իր ձագե
րի հետ, շնորհակալութիւն յայտնում և իրա սէրը ձեզ
է ցոյց տալիս: Օրինակ առէք փոքրիկ թռչնիկից. դուք
էլ աշխատէք միշտ բարի լինել, որ մարդիկ ձեզ միշտ
սիրեն, ուզեն:—

Մեր պարտէգի ծառի ձեզրում
մնձգուկը շինեց մի բուն.
Աձեց այնտեղ երկու ձւիկ,
երկու ձւիկ. երկու ծիտիկ.
Ձագիկներն ասին ծիկ, ծիկ,
Մեզ կը սիրես, սիրուն մայրիկ:

THE

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

~~_____~~

Blank page with some faint markings and discoloration.

«Ազգային գրադարան»



NL0387257

